

# Սուրբ Գրոց Սերտողութիւն : Դաս Թիւ 173

**Արդարացման Հռովմէական Կաթօլիկ տեսանկիւնը** – Թեպէտ Հռովմէական Կաթօլիկ Եկեղեցին ուսուցանում է որ Աստուծոյ արդարացման շնորհքը՝ նաեւ ճանաչւած որպէս Քրիստոսի ուղղարարութիւնը, անհրաժեշտ է արդարացման համար, սակայն Եկեղեցին ուսուցանում է որ այս ուղղարարութիւնը չի վերագրուում մեղաւորին, այլ ներմուծում է (ներադրում է) կամ ներս է սրկուում մեղաւորի մէջ՝ որը սկսուում է մկրտութիւնից: Ստանալով այս ներմուծւած շնորհքը մկրտութիւնում, հաւատացեալը պիտի ապա համագործակցի այս շնորհքի հետ շարունակաբար բարի գործերի միջոցով, եւ ուստի դառնայ աւելի ու աւելի բնականաբար ուղղարար կամ սուրբ: Այսպէս մէկը ապա գտնուում է մի շնորհքի դրքում (կամ մի արդարացման դրքում): Այս անձը կ'մնայ այդ դրքում այնքան ժամանակ որ չկատարի մի մահացու մեղք: Կաթօլիկ Եկեղեցին սահմանում է մահացու մեղքեր որպէս շատ լուրջ մեղքեր որը հոգեւոր մահ են պատճառում մարդունը, սպանելով հոգում ներմուծւած շնորհքը, եւ խախտելով նրա յարաբերութիւնը Աստուծոյ հետ: Այսպէս մէկը կարող է վերաարդարանալ ապաշխարանքի խորհրդի միջոցով՝ որը պահանջում է մեղքերի խոստովանութիւն, ապաշխարութիւն, եւ յագեցման արարքների կատարումը, որից յետոյ անձը դարձեալ ներմուծում է շնորհքով, եւ համագործակցելով դրա հետ կարող է արդարացման դրքումը վերականգնուի: Եթէ մէկը մեռնի մահացու մեղքի վիճակում, նա դժոխք կ'դատապարտուի. իսկ եթէ մէկը մեռնի աւելի քիչ լուրջ մեղքերով՝ ճանաչւած որպէս քաւելի մեղքեր, նա ապա կ'մտնի քաւարան, ուր նրա մեղքերը կ'սրբւեն (կ'մաքրւեն) եւ նա կ'դառնայ բնականաբար ուղղարար: Այս կարելի է տեսի մի պահ կամ հազարաւոր տարիներ, որից յետոյ նա կ'մտնի երկինք:

Տեսնում ենք մի գլխաւոր տարբերութիւն վերագրութեան եւ ներմուծութեան բառերի մէջ: Վերակազմ վարդապետութիւնը ուսուցանում է որ Քրիստոսի ուղղարարութիւնը վերագրում է մեր հաշիւն մեր արդարացման համար. իսկ Հռովմէական Կաթօլիկ վարդապետութիւնը ուսուցանում է որ Քրիստոսի ուղղարարութիւնը ներմուծում է մեր մէջ, գործում է մեր մէջ, եւ օգնում է մեզ մեր արդարացման համար: Վերակազմ վարդապետութիւնը ուսուցանում է թէ արդարացումը մեր ուղղարարութեան հռչակումն է՝ այլ Յիսուսի ուղղարարութեան հռչակումն է. իսկ Հռովմէական Կաթօլիկ վարդապետութիւնը ուսուցանում է որ Աստուծոյ արդար է հռչակում մէկին որովհետեւ նա բնականաբար արդար է՝ ունենալով մի ուղղարարութիւն որն իրենն է ու ոչ իրենից օտար կամ դուրս:

Հռովմը ուսուցանում է որ կան արդարացման աստիճաններ, քանի որ արդարացման շնորհքը կարող է շատանալ (աճել) մեր մէջ մեր բարի գործերով, եւ ուստի այդ մի յառաջադիմական ընթացք է: Սրանով նրանք խառնում են մէկ անգամայ արդարացման օրինական հռչակումը սրբագործութեան շարունակական ընթացքի հետ՝ որը աւելանում է հաւատացեալի կեանքումը: Արդարացումը հաւասար ու լրիւ է բոլոր նրանց մէջ որոնք հաւատում են Քրիստոսին՝ որը չի կարող աւելանայ կամ պակսի, քանի որ դրա հիմքն է Քրիստոսի ուղղարարութիւնը, որը կատարեալ է:

Վերակազմ վարդապետութեան մէջ, արդարացումը չի ազդում մի ներքին փոփոխութիւն մարդու բնութիւնումը, այլ միայն մի փոփոխութիւն մարդու դիրքումը: Ուստի մենք ասում ենք որ արդարացումը դրքային է, ու ոչ գոյացական: Այդ ազդում է մարդու դիրքը, ու ոչ նրա վիճակը: Հաւատացեալը արդար է հռչակում նախքան որ նա ներքնապէս արդար լինի (Հռովմայեցի 3:24, 28, 4:9-10, Գաղատացի 2:16, 3:11, Փիլիպպեցի 3:9, Տիտոս 3:4-7): Հռովմը միւս ձեռքի վրայ, հաստատում է որ արդարացման ընթացքում մարդու բնութիւնը փոխուում է, որից յետոյ Աստուծոյ արդար է հռչակում նրան:

Հռովմը ուսուցանում է որ առանց Աստուծոյ տրւած մի յատուկ յայտնութեան, մարդիկ չեն կարող վստահօրէն իմանան որ նրանք շնորհքի դրքում են թէ ոչ: Բայց Աստուծաշունչը յորդորում է մեզ որ ունենանք փրկութեան հաւաստիք (վստահութիւն) հենց հիմա, եւ չ'մնանք կասկածութեան մէջ հարցաքննելով թէ փրկւած ենք կամ թէ փրկւելու ենք ապագայում (Յովհաննէս 3:36, 6:47, Ա. Յովհաննէս 5:12-13): Երբ մենք հաւատում ենք Յիսուսին, առանցի մեր մէջ եղած որեւէ բարութեան, մենք արդարացած ենք հռչակում (Հռովմայեցի 5:1, 9, Տիտոս 3:7):

Աստուծաբանական տարբերութիւնները Հռովմէական Կաթօլիկութեան եւ աստուծաշնչային Բողոքականութեան միջեւ էական ու հիմնական էին 16րդ դարում եւ մնում են այնպէս նոյնիսկ այսօր: Հռովմի համար արդարացման գործիքային պատճառը միայն հաւատքը չի. եւ արդարացման նիւթական պատճառը միայն Քրիստոսը չի. եւ իրականում արդարացման ազդեցիկ պատճառը միայն շնորհքը չի: Թող երբեք չ'նազեցնենք այս տարբերութիւնները, քանի որ վտանգի կ'մատնենք հենց ինքը աւետիսը: Երբ աւետիսը դառնում է Աստուծոյ եւ մարդու մի գործ, ապա այն այլեւս աստուծաշնչային աւետիսը չի, եւ իրականում այն բնաւ բարի լուր չի, քանի որ դրա վախճանն է դատապարտութիւն: Բայց երբ աւետիսը այդ լուրն է որ մեղաւորներ փրկուում են միմիայն Աստուծոյ շնորհքով, միմիայն հաւատքի միջոցով, եւ միմիայն Քրիստոսում, ապա այն յիւսի որ բարի լուր է, եւ տարածում է, սփռում է, անհանգչելի կրակի նման՝ ինչպէս եղաւ Քրիստոսի ու Նրա աշակերտների ժամանակ, եւ եղել է ամեն անգամ որ այս ճշմարտութիւնը վերագտնուել ու հռչակուել է՝ որն էր պարագան 16րդ դարայ Բողոքական Վերակազմութեան ժամանակումը: